ՀԲԸՄ ԵԱ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԽՈՒՄԲԸ 10,000 ԱՄՆ ԴՈԼԱՐ Է ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ ՀԱՀ-ԻՆ

ՀԲԸՄ ԵԱ Հյուսիսային Կալիֆորնիայի խումբը, որն այս տարի նշում է իր 10-ամյակը և իր համայնքային գործունեության համար արժանացել է ՀԲԸՄ Կենտրոնական Վարչական Ժողովի գովեստին, իր տարեկան Գալա ճաշկերույթի ժամանակ հանգանակել և Հայաստանի Ամերիկյան Համալսարանի կրթաթոշակային ֆոնդին է նվիրաբերել 10,000 ԱՄՆ դոլար:



ՀԱՀ նախագահ Դր. Հարություն Արմենյանը և ՀԲԸՄ ԵԱ Երևանյան խմբի համակարգող Աննա Աղաջանյանը ՀԱՀ շրջանավարտների տարեկան հավաքի ժամանակ

Վերջին մի քանի տարիների ընթացքում ՀԲԸՄ-ի Նյու Յորքի, Լոս Անջելոսի և Հյուսիսային Կալիֆորնիայի ԵԱ խմբերը ընդհանուր առմամբ նվիրաբերել են ավելի քան 25,000 ԱՄՆ դոլար ՀԱՀ տարբեր ծրագրերի՝ ներառյալ կրթաթոշակային ֆոնդն ու թվային գրադարանը:

ՀԱՀ շրջանավարտների տարեկան հավաքի ժամանակ ՀԲԸՄ Երևանյան ամառային փորձառության ծրագրի կոորդինատոր և ՀԲԸՄ ԵԱ Երևանյան խմբի համակարգող Աննա Աղաջանյանը ՀԱՀ նախագահ Հարություն Արմենյանին հանձնեց 10,000 ԱՄՆ դոլարի անդորրագիր:

Նմանատիպ համագործակցությունները ՀԱՀ-ի և ԵԱ-ի Երևանյան խմբի հետ իմաստ և նպատակ են հաղորդում ՀԲԸՄ աշխարհասփյուռ ԵԱ խմբերին և նրանց գործունեությանը: Երիտասարդ արհեստավարժների խմբերը հպարտորեն շարունակում են Հայաստանում երիտասարդ կրթված սերունդ դաստիարակելու ՀԲԸՄ-ի երկարամյա ավանդույթը: